



Չոցին հոն են նաև Հնդկարքը, որոնց պատմութիւնը կը համընթանայ գոնէ քանի մը դար: Բայց դժուարութիւն չկայ մտածելու (— կամ թերևս հաւանական է մտածել —) թէ Խուրրիներն ալ վերաբերին բուն այն ժողովուրդներուն խմբին, որոնք գոնէ Գ. Հազարամեկին վերջերն արդէն գրաւած էին՝ իրր իրենց բնակավայր՝ Յառաջակողման Ասիոյ գանազան աշխարհները. — ուր ալ ասոնց իւրաքանչիւրն ունեցած ըլլայ իւր նախկին հայրենիքը կամ բնակութիւնը: Այս ժողովուրդներն նաև այն առաջին ժամանակ՝ երբ երեւան կու գան, լիակատար ազգեր են, արդէն խառնուրդներով եւ այնպիսի զարգացած ու այլակերպած լեզուներով, որոնք այլ եւս իրարու հետ կապ չունին: Նախահաթերէնն ու Հուրրիարէնն, ինչպէս ըսինք, իրարու հետ ազերս չունին, ո՛չ ալ ասոնց մին կամ միւրը՝ Սուժերարէնի կամ Ելամերէնի հետ, — յիշելու համար միայն գլխաւոր ազգերն՝ որոնք նոյն կամ նման ցեղային ընդհանուր նկարագիր մ'ունին: Որովհետեւ ասոնք ալ կարճագույն եւ մեծաուունգն են, եւ ընդհանրապէս նոյն կամ նման յայտանիշեր ունին, որոնք ունի «Փոքր-ասիական» (կամ «Հայաստան») ցեղը, բայց նաև արդէն կարեւոր տարբերութիւններով: Սուժերացիք՝ օրինակի համար՝ կարճագույն նկարագիր մ'ունին, բայց բաց ի աւելի նեղ քթէ՛ նաև ցցուն այտուսիք ու թեթեւ առիշեղ աչք, ուստի անշուշտ հին խառնուրդ մը նման յատկութեամբ որեւէ տոհմի մը հետ: Ելամացիք չունին այս վերջին խառնուրդը, բայց անոր փոխարէն հոն խառնուրդ մ'եղած է թիւս-գոյն Դրաւիդեան ցեղին հետ՝ որ մինչեւ կառկաս ալ տարածուած էր: Իրերու այս վիճակին մէջ գոնէ տարապայման չափազանցութիւն մըն է՝ Խուրրիները կամ Հուրրիները համարել իրր «Փոքր-ասիական» (կամ «Հայաստան») ցեղին հետ նոյն ընդհանրութիւնը:

են): Հմմտ. ի միջի պըրց՝ Pavel Poucha, Zur mittelasiatischen Lehnwortkunde: «Archiv Orientalni», IV, 1 (1932), p. 79—91. Տես նաև վարր՝ թէ ամէն կարճագույն անմիջապէս Ալպեան ցեղին պէտք չէ որ վերաբերի. — եւ սակայն այս կէտն է ամբողջ վարկածին հիմը կամ աւելի՛ պատրուակը: — Այս առթիւ յիշենք նաև Բ. Մինասեան, «Ազգութեան կենսաբանական զարգացումը», ի թերթին «Յուսարեք», 1932, թ. 234—235, 239 (Յունուար 1—2, 12), ուր Հայոց համար կ'ըսուի թէ «մի ճիւղ» ըլլան «Ալպեան ենթացեղի»: — Կից՝ «Ազգային գաղափարաբանութիւն»՝ անդ, թ. 240 (Յունուար 13): Իւր ուրիշ գրուածքներն՝ այլուր:

որ միանգամայն միակն ալ ըլլայ այն տարածութեան մէջ իրր նախաւոր բնակչութիւն՝ անյիշատակ ժամանակներէ վեր: Եւ նոյն չափազանցութիւնն ըրած կ'ըլլանք՝ եթէ նոյնը պնդենք նախահաթերու մասին, որչափ ալ հոս մինչեւ անգամ առերեւոյթ իրաւունք մ'երեւայ, քանի որ «Փոքրասիական» կ'որակուի ճշգիւ այն «այրանդակ» տիպարը, զոր կը ներկայացընեն «Հաթերն» կամ անոնց ընդայուած բազմաթիւ քանդակներն ու յիշատակարանները, բոլոր այն երկիրներուն մէջ, ուր Հաթերն ոտք դրած են պատմութեան ընթացքին: Բայց արդ այս «Հաթերն» կամ Նախահաթեան տիպարն ալ նման նշաններ ունի՝ գոնէ մասամբ (ցցուն այտուսիք), ուստի ունեցած է նոյնպէս հին խառնուրդ մը: Միւս կողմանէ այն ընդարձակ տարածութեան մէջ՝ Սեւ ծովէ մինչեւ Միջերկրական, — մանաւանդ եթէ Գամբաց աշխարհի ու Կիլիկիոյ հետ առնուք նաև Հիւս. Ասորիք, — ի հարկէ միակ ժողովուրդ մը չէր եւ ապահովապէս ո՛չ ալ միակ ցեղ մը. քանի որ նաև Երկարագույններ կը գտնուին այդ շրջանանակին մէջ: Նաև նոյն «Հաթերն» յիշատակարանաց մէջ մասին մէջ փոխանակ կարճ եւ անմիջապէս դէպ ի գագաթ յետս նահանջող ճակատի, կը տեսնուի բարձր ու մեծ ճակատ, ուստի Երկարագույն կամ գոնէ Կէս-Երկարագույն տիպար մ'ալ: Անշուշտ հնդկիկ-երոպական Հաթերն իրենց հետ չբերին այն կարճագույն տիպարը, երբ այն կողմերն երեւեցան գոնէ Ի. դարուն Ն. Ք., մաս մը՝ նաև քանի մը դար աւելի յառաջ: Բայց խառնուրդով Նախահաթերու հետ՝ աւելի կամ նուազ չափով ընդունեցան նոյն տիպարը, այնպէս՝ ինչպէս ընդունած են նոյնն այլեւայլ շափով՝ արիական եւ այլ ազգեր (Հմմտ. Հայք, Պարսք եւն) եւ նաև Սեմացիք՝ ինչ անուն ալ կրեն այսօր կամ կրած ըլլան պատմութեան ընթացքին (Հմմտ. նաև արդի Հրէից «Հաթերն» կոսմոնիէ մեծ քիթը): — Նշանակենք թէ բաւական տարօրինակ ազդեցութիւն մ'ունեցած է վերջերս «Խուրրիական հասկացողութիւնը»<sup>232</sup> որ ի վեր-

<sup>232</sup> ԲՁՄ. 1932, թ. 3, էջ 110—111 կը կարդանք թէ «Բողոքեցողի ազիւնները» կը համարուին միայն եւ միայն Հաթեան «թագաւորական գրատան հաւարածոյ մը, «բայց ցարդ ո՛չ մէկ քաղաքի կամ արքունի ստանի մը հետ գտնուած չէ» (՝) ուստի Հեղինակին «միտքը կը սյանայ դէպ ի Սիմոյ», որովհետեւ Մովսէս Խորենացի հոն կը գնէ կամ կը յիշէ դիւան

ջոյ առիթ եղած է նաև յաջորդ զխոտուրթեանց<sup>233</sup>:

Այս ժողովուրդներէ կամ ազգերէ, ինչպէս աւելի եւս իրաւամբ կոչելու ենք, եւ ո՛չ մին նախնական ժողովուրդ էր, այլ ունեցած էր արդէն երկար զարգացում. եւ մինչեւ անգամ այն ցեղը (եւ ցեղերը) կը վերաբերէին արդէն ցեղերու վերջին փուլին, կամ «Խառնածե Յեղիբու» շարքին, ինչպէս կը կոչէ

մը, — սակէ «դիւանի փոխադրութիւն» մ'եղած կ'ըսէ զէպի «Բողոքեցողի աննշան տեղայ մէջ» եւն: — Բայց զուս կամայական վարկածէ՛ Հեղինակին ծանօթ են՝ ինչպէս կը տեսնուի՝ Հատուշաշ մեծ մայրաքաղաքին նաև արդի ընդարձակածաւալ մնացորդներն «աննշան» Բողոքեցողի մէջ, եւ ո՛չ ալ շրջակայից բազմաթիւ հազոյն քաղաքակերպացիքները: Աւելի տարօրինակն է յաջորդը: Դիւանի այս «փոխադրութիւնը» կը համարուի իրր նշան Արիական ցեղի տարածման «Միջերկրացոյց, Հայաստանի եւ Վերին Ասորիքի վրայ», եւ «այս երեք երկիրներու մէջ միեւնոյն ցեղի տարբեր գաւառաբնակներ խոտուած են» (՝): Ասորեստանցիք կամ Բողոքեցողի դասոնք Խուրրի կամ Հուրրի (Ուրրի) կոչեր են... Վերին Ասորիք եւ Հայոց Միջագետք Խուրրի կամ Խուրի կոչուած է. նոյնպէս Հայաստանի մէջ մասն ալ կոչուած է, եւ թեւեւագիրներու մէջ ալ կարգացուեր է Հուրրարուս (— այսինքն՝ — Ուրարուս): Եւ «ժողովրդի տանգութեան մէջ» նաև «մինչեւ Ն. դար Յ. Ք.» տարած ըլլայ Խուրրի անունը. այսինքն՝ ա՛յսպէս մեկնելով Խորենացոյ պատմածը թէ քրմերը կոչոյ արձանները չէին ուղած Հայաստանի խորքերը տանել (— ուստի «չուղելով երթալ Խուրրի Հայաստան»), մնացին Երկրացոյ գաւառի մէջ: Իրեն համար ստոյգ է թէ ինչպէս կը գրուի «Խուրին Ասորիք», նոյն մտօք գտնուի նաև «Խուրին Հայաստան» — որ այս մտօք մական կը յիշուի թէ արդէն «Արամ Նահապետի» օրով «Հայաստան» երկու հազար տարի Ն. Ք.՝ իրաւունք կը բանեցընէր կապագովկիոյ Խուրրիներու վրայ», եւ «Մաժակի բնակչաց կը հրամայէ հայերէն խօսիլ»: — ճիշդ այն ստեղծ էրը հնդկիկեր. Հաթերը կը տիրէին նախահաթեան Հատուշաշի եւ սեմական կանչի, ուստի Մաժակի դարերով ու դարերով հին նախորդին (Հմմտ. § 10, ճն. 213): Որոշ է թէ այս խառնակոյտին մէջ (Ուր, Խուրրի, Ուրարուս, եւ «Խուրի») աշխարհաբանական ու սովորական բառի մտօք) չափազանց մեծ ազդեցութիւն ունեցած է «Խուրրիական հասկացողութիւնը»՝ իւր այն կարծիքներով, որոնք մատնանիշ ըրինք (Հմմտ. վերը § 9 եւ 10): — Այս առիթը կը գտնենք գրուած յօդուածաշարքի մը շարունակութեան մէջ, որուն խորագիրն է՝ «Քրիստոնէական ճարտարապետութիւն», Հ. Գ. Նախապետեանի. անդ՝ էջ 101—113, որուն նպատակն է ցուցնել՝ նոյնպէս ոչ նուազ տարօրինակ ազդեցոյցներով վարկածս թէ «Հայկական ճարտարապետութիւնը տեղական է, Հայք եկող գնացող ազգերու մէջ պահած է իր դեղարուեստի տիպարը»: — Երկար է յօդուածներու շարքը՝ սկսելով ԲՁՄ, 1930, թ. 3, էջ 102—105 (Հմմտ. անդ, թ. 4, 5, 7—8, 11. — անդ՝ 1931, թ. 1, 9—10, 12. — անդ՝ 1932, էջ 52—62, 101—113, 193—209, 241—254):

<sup>233</sup> Այս առթիւ նշանակենք նաև յօդուածս՝ Ա. Սափրատեան, «Հաթեր եւ Ուրարուսներ», ԲՁՄ, 1932, էջ 114—116, դիտողութիւններով մեր յօդուածաշարքին մէջ մասին վրայ: Առիթ կ'ըլլայ անդրադառնալու, նոյնպէս իւր տեղեկագրին՝ «Նախապատմական դիտողութեանց Միջագետքին Համալուծարք», «Ազգայն», 1932, Օղ. 8 եւ Սեպտ. 14. եւ ուրիշ քանի մը գրուածքներ:

զանոնք նշանաւոր Մարդախօս մը, որուն նոր գործոյն վրայ՝ զոր այլեւայլ առթիւ պիտի յիշենք, հոս քիչ մ'աւելի մանրամասն խօսիլ պէտք է: Վիեննայի Համալսարանի Վաղահնարարութեան (Paläarchäologie) ուսուցչապետը հրատարակած է՝ քիչ ժամանակ յառաջ գործ մը, որ կոթող մըն է նոյն վերաբերան եւ բազմաթիւ նոր ու բեղմնաւոր զաղափարներով նաև ուսման խորագիրն է՝ «Տիւրքիական Պատմութեան Խորագիրն է՝ «Տիւրքիական Պատմութեան Խորագիրն է՝ «Տիւրքիական Պատմութեան մաս նկատել, եւ այն՝ իրր շրջաններն ալ կ'ուղէ իրր Երկրակի Պատմութեան մաս նկատել, եւ այն՝ իրր Խուրրի կամ Հուրրի (Ուրրի) կոչեր են... Վերին Ասորիք եւ Հայոց Միջագետք Խուրրի կամ Խուրի կոչուած է. նոյնպէս Հայաստանի մէջ մասն ալ կոչուած է, եւ թեւեւագիրներու մէջ ալ կարգացուեր է Հուրրարուս (— այսինքն՝ — Ուրարուս): Եւ «ժողովրդի տանգութեան մէջ» նաև «մինչեւ Ն. դար Յ. Ք.» տարած ըլլայ Խուրրի անունը. այսինքն՝ ա՛յսպէս մեկնելով Խորենացոյ պատմածը թէ քրմերը կոչոյ արձանները չէին ուղած Հայաստանի խորքերը տանել (— ուստի «չուղելով երթալ Խուրրի Հայաստան»), մնացին Երկրացոյ գաւառի մէջ: Իրեն համար ստոյգ է թէ ինչպէս կը գրուի «Խուրին Ասորիք», նոյն մտօք գտնուի նաև «Խուրին Հայաստան» — որ այս մտօք մական կը յիշուի թէ արդէն «Արամ Նահապետի» օրով «Հայաստան» երկու հազար տարի Ն. Ք.՝ իրաւունք կը բանեցընէր կապագովկիոյ Խուրրիներու վրայ», եւ «Մաժակի բնակչաց կը հրամայէ հայերէն խօսիլ»: — ճիշդ այն ստեղծ էրը հնդկիկեր. Հաթերը կը տիրէին նախահաթեան Հատուշաշի եւ սեմական կանչի, ուստի Մաժակի դարերով ու դարերով հին նախորդին (Հմմտ. § 10, ճն. 213): Որոշ է թէ այս խառնակոյտին մէջ (Ուր, Խուրրի, Ուրարուս, եւ «Խուրի») աշխարհաբանական ու սովորական բառի մտօք) չափազանց մեծ ազդեցութիւն ունեցած է «Խուրրիական հասկացողութիւնը»՝ իւր այն կարծիքներով, որոնք մատնանիշ ըրինք (Հմմտ. վերը § 9 եւ 10): — Այս առիթը կը գտնենք գրուած յօդուածաշարքի մը շարունակութեան մէջ, որուն խորագիրն է՝ «Քրիստոնէական ճարտարապետութիւն», Հ. Գ. Նախապետեանի. անդ՝ էջ 101—113, որուն նպատակն է ցուցնել՝ նոյնպէս ոչ նուազ տարօրինակ ազդեցոյցներով վարկածս թէ «Հայկական ճարտարապետութիւնը տեղական է, Հայք եկող գնացող ազգերու մէջ պահած է իր դեղարուեստի տիպարը»: — Երկար է յօդուածներու շարքը՝ սկսելով ԲՁՄ, 1930, թ. 3, էջ 102—105 (Հմմտ. անդ, թ. 4, 5, 7—8, 11. — անդ՝ 1931, թ. 1, 9—10, 12. — անդ՝ 1932, էջ 52—62, 101—113, 193—209, 241—254):

Երրորդ Հատուշն է «Նախաբայրային մշակույթներ» (էջ 87—135), ուր քննութեան առնուած են նաև Այգաբաբեան (Eolithikum) շրջանի, ինչպէս նաև Անֆաթ (Alithe) Փայտալուծակոյթի կարեւորութեան խնդիրները, բայց ի մանաւորի նոյն շրջանի Քարաշեղբի,

<sup>234</sup> Oswald Menghin, Weltgeschichte der Steinzeit, Wien 1931, pp. XVI + 648; mit 1029 Abb. und 7 Karten.

Քարասեպի եւ Ոսկրեպ մշակոյթները<sup>235</sup>, եւ ի վերջոյ (— ինչպէս միւս գլուխներուն վերջն ալ իւրաքանչիւր ժամանակամիջոցի —) այն մշակոյթներուն Զարգացումը, այսինքն՝ սկզբնաւորութիւնն ու ծագումը, զարգացումն ու տարածումը: Թէեւ ընդհանրապէս Յառաջակողման Ասիոյ շատ մասեր նոյն իսկ չեն քննուած, ուրիշ մասերու հազիւ քննութեան մը ձեռնարկուած կամ նոր սկսուած, կարելի եղած է արդէն, կ'ըսէ. «Ժամանակի կողմանէ լաւ որոշուած՝ նախաքարային գիւտերու մեծագոյն թիւ մը» նշանակել՝ այս հնագոյն շրջանէն, ի հարկէ գլխաւորաբար ի Պաղեստին, ուր «խաւաքական խիստ հետազոտութիւններ կատարուած են»: Հոս, կ'ըսէ, հին ժամանակ իբր Եգիպտոս եւ Աշխարհի նկարագրուածները կամայինեան ըլլալու են. նոյնը կրնանք ըսել — թէեւ ոչ անհրաժեշտաբար — այն ամէն գիւտերուն համար՝ որոնք հողի երեսը գտնուած են ամէն կողմ Հիւս. Ասորիքի եւ հետաւոր մասերու մէջ Հիւս. Փոքրասիոյ<sup>236</sup>: Բացի Պաղես-

<sup>235</sup> Նշանակելը թէ ասոնց գերմ. բացատրութիւնք են՝ Kl ing en kulturen (Սայրերու մշակոյթներ, Դանակներ են), Faustkeil kulturen (Բռնասեպերու մշակոյթներ, Մուրճեր են) եւ Knochen kulturen (Ոսկրեպ մշակոյթներ): — Յաջորդներուն մէջ յիշուած են նաեւ քանի մ'ուրիշ յորջորջաններ մասնաւոր նախապատմական մշակոյթներու այլեւայլ աստիճաններուն, որոնց մեծ մասն անուանւած է սեպերու անուններէն՝ թիչ շատ ամէն երկիրներէն: Այսպէս (ընտանացապէս գերմ. աւարտներով) Aurignacien, Acheuléen, Chelléen, Campignien, Moustérien, Solutréen են՝ կը վերաբերին Գաղղիոյ կամ այն երկրին տեղեաց անուններէն անուանուած են: Բայց Capsien կը վերաբերի Հիւս. Աֆրիկէի, Grimaldien՝ Իտալիոյ, իսկ Antélien յորջորջանքն անուանուած է Ասորիքի մէկ տեղէն, որ այժմ ամէն հայտ. ծանօթ է՝ իբր նոր նիստ կաթողիկոսութեան, այն է՝ Անթիլիաս, Բէյրութի մօտ: Այսչափն՝ իբր օրինակ:

<sup>236</sup> Համառ. անդ՝ էջ 27—28. Ճոխ ցուցակով մ'ալ մասնից, որոնցմէ յիշուին՝ G. Z u m o f f e n. La Phénicie avant les Phéniciens. L'âge de la pierre. Beyrouth 1900; L'âge de pierre en Phénicie: «Anthropos», III, 1908, p. 431 ff. — Fr. Neophytus, La Préhistoire en Syrie-Palestine: «L'Anthropologie», XXVIII, 1917, p. 313 ff. — M. Blanckenhorn, Die Steinzeit Palestina-Syriens und Nordafrikas. Leipzig 1921. — R. Describes, Industrie paléolithique en Phénicie: «Mélanges de la Fac. Or.» (Beyrouth), VII, 1921, p. 189 ff. — M. Ramström, Über die älteste Steinzeitkultur in Asien und Afrika etc. Uppsala 1927, եւ բազմաթիւ ուրիշներ. — Ի մասնաւորի՝ P. Thomson, Palästina und seine Kultur in fünf Jahrtausenden («Alte Orient», Bd. 30). 3. Aufl. Leipz. 1931, pp. 120; 16 Taf. — A. T. Olmstead, History of Palestine and Syria, to the Macedonian conquest. Lond. 1931, ill. — F. Scholten, Palestine illudred, ed. by G. R. Lees, Vol. 1—2. Lond. 1931. — R. Aimagià, Palestina. Roma 1930, pp. 140, con 265 riprod. e 216 ill. — W. Borée, Die alten Ortsnamen Pa-

alästina. Leipzig 1930, pp. 125. — Albright W. F., The Archaeology of Palestine and the Bibl. New York 1932, pp. 232. — L. Dressaire, Jérusalem à travers les siècles. Paris 1932, pp. 544; 63 gravures, 2 plans. — E. Klippel, Wanderungen im Heiligen Lande. Berlin 1927, pp. XVI + 388, 129 Abb., 1 Karte. — G. Rosen, Juden und Phönizier. Das antike Judentum etc., neu bearb. und erweitert von Fr. Rosen und G. Bertram. Tübingen 1929, եւ անթիւ երկեր՝ յատկապէս Պաղեստինի մասին:

<sup>237</sup> D. A. E. Garrod, Notes on some Moustertian finds in Spain and Irak: «Proc. Arch. Soc. East. Anglia», V, 1928, p. 268 ff. — The palaeolithic of Southern Kurdistan: Excavations in the caves of Zarzi and Hazar Merd: «Bull. Amer. School of Research», VI, 1930, p. 9 ff.

<sup>238</sup> Համառ. անդ, էջ 39—40, 195—196, 211—213 են: Յիշատակուած աղբիւրներէն նշանակելը միայն՝

ախնէ՝ Մուստերեանն ըտլորովին ապահով կերպով ապացուցուած է Հարաւային Քրքր-դաստանի մէջ<sup>237</sup>: Այս տեղերը բնականապէս համապատասխանող մշակոյթներ ունեցած են նաեւ յաջորդ՝ Նուաղաքարային շրջանին, որուն նուիրուած է ընդարձակ գլուխ մը (Հատած Դ. «Նուաղաքարային մշակոյթներ» էջ 137—271): Այս ժամանակաշրջանի Յառաջակողման Ասիոյ հետազոտութիւնը շատ գուզնաքեայ է եւ լաւ է կատարուած: Միայն Ասորիք կանոնաւոր աշխատանք սկսած է եւ այն՝ տակաւին նոր, բայց արդէն ճոխ գիւտերով յԱնթիլիաս՝ Բէյրութի մօտ: Նուաղաքարեակի սկիզբը, կ'ըսէ, Միջին-Օրինեակազդի մշակոյթ մ'եղած է, որուն յաջորդած է տեղական ասորիական մը՝ ոսկրազիծ զարգերով. զասի, կ'ըսէ, կրնանք Անթիլիան կոչել՝ տեղեաց անուամբ: Կը յաջորդեն Անագան-Կապսեան եւ Հնագոյն-Կամպիլեան մշակոյթներ, որոնց հետ միաժամանակ գտնուած են ուրիշ մշակոյթներ ալ, յատկապէս նաեւ Նորաքարեանը: Նախանորաքարային մշակոյթներ գտնուած են նաեւ Տիգրիսի եւ Եփրատոյ աւազանաց մէջ, եւ յատկապէս Հարաւային Քրքրաստանի մէջ ծագիւած է Քարաշերտի մշակոյթ մը որ շատ մերձաւոր է Գրիմալքիականին: Ասոր յաջորդած է՝ ինչպէս Ասորիքի մէջ, մանրաքարային տեսակի մշակոյթ մը՝ որ կայ ունեւայլու է Անագան-Կապսեանին հետ: Այս վերջին տեսակն ըստ երեւութի մինչեւ Միջագետք կը տարածուի: Միւս կողմանէ Անագան-Նուաղաքարային շրջանի Քարասեպի կամ Բոնաքարի մշակոյթները թէ՛ Յառաջակողման Ասիոյ եւ թէ՛ Եւրոպ-Աֆրիկեանին իրարու շատ մերձաւոր են<sup>238</sup>:

Յաջորդ կրկին գլուխներն ուրիշ տեսակիտով են, այսինքն՝ նախ «Նախանորաքարային Մշակոյթներ» (Հատած Ե, էջ 273—326) գլուխը նկատողութեան կ'առնու ետգաբուծական մշակոյթներ (բայց նաեւ՝ Եւրոպական-Միջերկրական Գլանատապարի մշակոյթն են), Պանաքարուծական մշակոյթները (բայց նաեւ յատկապէս՝ Անաւ Ա.) եւ վերջապէս Գրաստաբուծական մշակոյթներ (Ներքին-Ասիական, Կորի են): Իսկ յաջորդ գլուխ՝ «Նախանորաքարային մշակոյթներ» (Հատած Զ, էջ 327—477) արդէն կ'ուսումնասիրէ գիւզն ու քաղաքը, եւ այն նախ՝ նախիք գիւզն ու քաղաքը, եւ այն նախ՝ «Գիւղական մշակոյթներ», յատկապէս՝ Տարուսեան, Արեւելեան-Եւրոպական, Ասորական, Աֆրիկեան, Հիւսիս. եւ Արեւմ. Եւրոպական, Միջագետական, Ասորական եւ Ասորական-Արաբական: — Տարուսեան (եւ այն՝ յատկապէս Գիւղական) մշակոյթին համար կ'ըսուի թէ տարածուած է Տարուսեան լեռնաշղթային արեւելքն ու արեւմուտքը, բայց նաեւ ճոխ խաւերով, կամ գոնէ հետքերով, կը գտնուի Երանի ամրոցը բարձրաշխարհին մէջ մինչեւ Հնդկաստանի դռները, Միջագետք, Հայաստան, Հիւսիսային Ասորիք եւ նաեւ Յունաստան: Կը բաժնուի Արեւելեան-Տարուսեան եւ Արեւմտեան-Տարուսեան խմբերու: Ասոր կը վերաբերի Երիզուի մշակոյթը (արդի Արու Շահէին, գերեզմաններ՝ Էլ-Ուբէյդ են)<sup>239</sup>: Ճոխ է Պարսկաստանի տուած ա-

Delcourt, Observations sur l'abri de Ksar Akil près Antelias: «Bull. Soc. Préh. Franç.», XXIV, 1927. — E. Werth, Jungpaläolithische Steinwerkzeuge von Kuseine. Berlin 1920. — B. Crawshaw, Prehistoric Man in Mesopotamia: «Man», XXIII, 1923, p. 111 ff. եւ ուրիշներ:

<sup>239</sup> Անդ, էջ 330 են: Յիշուած գրութեանց մէջ, որոնցմէ բնական մաս մ'արդէն յիշուած ենք (վերջին 104—106 եւ նաեւ թիչ մ'եղածը) նշանակելը նաեւ Հոս յաջորդներս. R. C. Tompson, The British Museum excavation at Abu Shahrain in Mesopotamia (1918), «Archaeologia», LXX, 1920, p. 101 ff. — H. R. Hall, Excavations at El-Mukayyar, Abu Shahrain and El-Obeid: «Proc. Soc. Antiq.», London, XXXII, 1920 etc. — W. F. Albright, Proto-Mesopotamian painted ware from the Balikh Valley: «Man», XXVI, 1926, p. 41 ff. — H. R. Hall and C. L. Woolley, Ur excavations, I. El-Ubaid. Oxf. 1927, fol. — եւ ուրիշներ, օրինակ՝ C. L. Woolley, Asia Minor, Syria and the Aegean: «Liverpool Annals», 1922, p. 41 ff. — նոյն՝ Early pottery from Jebel: «Liverpool Annals», X, 1923, p. 36 ff.

տաղճը, որ Արեւելեան-Տարուսեան խմբի կը պատկանի. բայց, կ'ըսէ, ինչ որ այն կողմերէն մինչեւ հիմա ծանօթացած է, տակաւին կարելի է ժամանակագրութիւն եւ տեղադրութիւն (— «chorologisch» —) զատորոշել, սակայն կ'երեւայ թէ կը վերաբերին Քաղաքային մշակոյթներուն, որոնց կը վերաբերի նաեւ Եփրատոյ շրջանաց Արեւելեան-Տարուսեանին մեծագոյն զանգուածը, որ կը բաժնուի կրկին՝ Հիւսիսային-Միջագետական եւ Միջին-Միջագետական խմբերու (յատկապէս Ալմադէթ Նասր, Սամառա, եւ մանաւանդ Գաւրա-Թէփէ են): Տարուսեան Քաղաքային մշակոյթներէն է Ծօշի մշակոյթը (հին եւ կրտսերաբոյն). — ճոխ են նաեւ Ասորական մշակոյթները, յատկապէս Հարաւ-Ասորական Նորաքարեակը<sup>240</sup>: Բնականապէս նաեւ այս տեղ շօշախուած է հին-սուամերական խաւերուն ժամանակի խնդիրը: Ինչպէս արդէն յիշեցինք՝ Ուրի եւ Քիլի պեղիչները, որոնց կարծակից են նաեւ ուրիշներ, հնագոյն խաւն սկսած կը համարին իբր 3500 Ն. Ք. եւ աւարտած իբր 3100ին<sup>241</sup>. Բայց ուրիշներ այսչափ հնութիւն չեն ուզեր ընծայել եւ Ուրի հնագոյն խաւը ժամանակակից կը համարին Լազաշի շրջանին եւ մինչեւ անգամ Աքատեան հարստու-

<sup>240</sup> Տես էջ 330—331, 430—434 են, ի մասնաւորի՝ Տարեան Գիւղային մշակոյթներ՝ անդ, էջ 330—340, Ասորական Գիւղային՝ էջ 356—359 են: — Տարուսեան Քաղաքային մշակոյթներ՝ էջ 430—435: Միջագետական Քաղաքային՝ էջ 435—437: Արեւելեան-Միջերկրական՝ էջ 443—450: Ասորական Քաղաքային՝ էջ 450—451 են: — Յիշատակուած բազմաթիւ մատեններէն՝ Պարսկաստանի Արեւելեան-Տարուսեանին համար E. Herzfeld, Völker und Kulturzusammenhänge im alten Orient, Berlin 1928. եւ ի հարկէ ճոխ մատենագրական մը յատկապէս Երանի մասին՝ անդ, էջ 433 են, զորոնք աւելորդ կը համարինք Հոս նշանակել. — Ասորական-Միջագետականին համար ի միջի այլոց՝ E. A. Speiser, Preliminary excavations at Tepe Gawra: «Ann. Amer. Schools Orient Research», IX, 1929, p. 17 ff. — A. Koh n, Die praehistorischen Perioden in Palästina: «Mitt. d. Anthr. Ges. in Wien», XLIV, 1914, p. 81 ff. եւ (տես թիչ մ'եղածը):

<sup>241</sup> Այսպէս՝ C. L. Woolley, The Sumerians. Oxf. 1928. — H. R. Hall, The discoveries at Ur and the seniority of Sumerian civilisation: «Antiquity», II, 1928, p. 56 ff. — V. G. Child, The most ancient East. Lond. 1928. — A. Herz, Das Alter der Gräberfunde von Ur: «Klio», XXIII, 1930, p. 460 ff. — St. Langdon, Excavations at Kish. I. Paris 1924. III, 1930 (համառ. Ausgrabungen in Babylonien seit 1918. Leipz. 1928 = «Der alte Orient», XXVI). — նոյն՝ Sumerian Origins and racial characteristics: «Archaeologia», LXX, 1920, p. 145 ff. H. Frankfort, Sumerians, Semites and the Origin of Copper-working: «The Antiq. Journ.», IX, 1929, p. 344 ff. են:

Թեան (իրբ 2600—2500)<sup>242</sup>: Քիշի մէջ գլուխուած են իրեր, որոնք, կ'ըսէ, չունին իրենց համեմատականը Միջագետքի մէջ<sup>243</sup>: Հիւսիսային Ասորիքի գիւտերը տակաւին համեմատաբար աղքատ են եւ մասամբ տակաւին լիովին չեն հրատարակուած (Սաքչէ-Կէօղլու, Թէլ-Հալաֆ եւն): Ճոխ են Հարաւային Ասորիքի, այսինքն բուն Պաղեստինի եւ Քանանու գիւտերը, բայց նաեւ ասոնց ճշգրիտ ժամանակը տակաւին խնդրոյ առարկայ է<sup>244</sup>: Ժամանակի տեսակէտով Ելամականներէն՝ Շօշ Ա., ինչպէս արդէն ըսուեցաւ, կապ ունի Երիզուի հետ, իսկ Շօշ Բ՝ Աքաաթի հարստութեան հետ: Ասուք, կ'ըսէ, շատ հին խաւեր չունի: Շատ կարեւոր եւ չտիպահանջ խոր խաւերով է Անաւ (Մերվի շրջանին մէջ), որուն Ա. խաւն իրբ 3000է ըլլալու է, եւ վերնագոյն խաւը յամենայն դէպս 1500է անաղան չէ: Այս տեղոյ մասին կոթողային հրատարակութիւն մ'ըրած են պեղիչները<sup>245</sup>: Արեւմտեան Յառաջակողման Ասիոյ նորաբարային մշակոյթներուն քննութիւնը տակաւին սկզբնաւորութեան մէջ է, եւ «Անատոլիոյ հնագոյն նորբարային մշակոյթը շատ քիչ ծանօթ է»: միայն «Սեցեդորձութիւնն է մինչեւ այժմ հիմն ժամանակագրութեան»: Տրովա Ա. կը հասնի մինչեւ Դ. Հազարամեակի հնութեան («կարմիր յգիկալ խցիկներ») եւն<sup>246</sup>:

Այս շարքին մէջ յիշուած է վերջապէս նաեւ Հայաստանի մէկ հնավայրը. այն է՝ այժմ «Շամիրամալթի» կոչուած վայրը, Շամիրամագետի (բուն՝ Մենուասայ ջրմուղի) վրայ, անոր շինութենէն ի հարկէ հազարէ աւելի տարիներ հին, գերեզմանատեղի (եւ թերեւս միանգամայն բնակավայր): Այս մասին կը գրուի. «Նորաբարեան գիւտեր կան նաեւ Հայաստանէ: Մեծագոյն մասը Շամիր-

ամալթի դանուած է՝ Վանի մօտ<sup>247</sup>: Այն տեղոյ բլուրը («Թէլ») ո՛չ լաւ կերպով եւ ո՛չ ալ մինչեւ իւր խորագոյն խաւերը պեղուած է: Մինչեւ այժմ գտնուածն՝ ըստ Jenny՝ կարելի է երկու աստիճանի բաժնել. հին աստիճան մը՝ որ ամէնէն կանուխ իրբ 2500ին սկսած ըլլալու է, եւ անաղանագոյն մը՝ որ իրբ 1200ին կը վերջանայ: Երկուքին միջեւ սահմանը գտնուելու է թերեւս իրբ 1700ին: Հայաստանի այլեւայլ ամաններն ա՛յնպէս մերձաւոր են Շօշ Ա.ա եւ Ա.ք ապրանքներուն, որ զանոնք հաւանօրէն նոյն շրջանին վերագրել կրնանք<sup>248</sup>: — Ժամանակագրական տարիապահով մը մէջ Շամիրամալթի աստիճանները կընուած են ուրիշ տեղերու խաւերուն հետ<sup>249</sup>: Աւելի հնագոյն ժամանակի մէջ նշանակուած են նաեւ «Ամաններ Երեւանի, Ուրմիոյ եւն<sup>250</sup>»: Ինչպէս ծանօթ է՝ տեղս դատած են Լէման-Հատուղ եւ Բէլթ, երբ Ուրարտեան արձանագրութիւններ եւ ուրիշ յիշատակներ կը հետազոտին, իսկ պեղումը կատարած է Վ. Բէլթ, որ պեղած է մեր հայրենեաց նաեւ ուրիշ տեղեր: Այս ամէնուն մասին աւելորդ կը համարինք հոս երկարել, քանի որ նոյն ուղեւորաց զանազան գրուածքները ծանօթացուցած ենք ժամանակին՝ նաեւ այլեւայլ մասանց թարգմանու-

<sup>247</sup> Անդ, էջ 46 իրբ աղբիւր նշանակուած են՝ L. W. King, The prehistoric cemetery at Shamiramalti near Wan in Armenia: «Proc. Soc. Biblic Archaeol.», XXXIV, 1912, p. 196 ff. — W. Jenny, Shamiramalti: «Prähist. Zeitschrift», XIX, 1928, p. 280 ff.

<sup>248</sup> Վիպրութեան կը կոչուի՝ H. Frankfort, Studies, I, 38; II, 184. — H. Frankfort, Studies in Early Pottery of the Near East. I. Mesopotamia, Syria and Egypt and their Earliest Interrelations. London 1924. — II. Asia, Europe and the Aegean and their Earliest Interrelations. London 1927 (R. Anthr. Inst. occ. Pap. 6 and 8).

<sup>249</sup> Անդ, էջ 48: Շամիրամալթի՝ Հնագոյն աստիճանը կը կոչուի հետեւեալ խաւերուն հետ = Գ. Հարստութիւն Ուրի. — Ե. Հարստութիւն եւ Գ. Հարստութիւն Ուրուկի, Գուտեցիք, Հարստութիւն Արատի (2000—2500 Ն. Ք.). — Ասուք E, Ասուք F. — Շօշ Գ (Սկիզբն). Շօշ Բ ք (IIb). — Անաւ Գ (հնագոյն մասն). — Կարմիր-յգիկալ խցիկը Տրովայ Բ. — Հին-քանանեան շրջան (Մեկուր Բ-Գ, Meggido II—III) Գոլմէն. — Կանուխ-Կիտրական Գ (Կարմիր-յգիկալ եւ որթագիծ խցիկը):

<sup>250</sup> Անդ՝ «Ամաններ Երեւանի, Ուրմիոյ եւն» կը կոչուին հետեւեալ խաւերուն հետ = Ա. Հարստութիւն Ուր, Պատեի Լուզաչի, Ջէմզէթ Կաթ. — Մշակոյթ Երիզուի (2500—3000 Ն. Ք.). — Շօշ Բ ա (II a). — Անաւ Բ (Շօշ Ա.ք-ա, I b-a). — Ասուք G՝ եւ H. — (Կարմիր եւ սև յգիկալ խցիկը Yortanի Տրովայ Ա.). — Կրտսեր Նորաբարեակ (Meggido I). — Կանուխ-Կիտրական Ա. եւ Բ (Կարմիր-յգիկալ խցիկը):

<sup>242</sup> Այսպէս՝ V. Christian, Entwicklungsprobleme der altmesopotamischen Kunst: «Wiener Beiträge zur Kunst- und Kulturgeschichte Asiens», III, Wien 1927—1928, p. 7 ff. եւ ուրիշներ:

<sup>243</sup> L. Ch. Watelin, Notes sur l'industrie lithique de Kish: «L'Anthropologie», XXXIX, 1929, p. 65 ff.

<sup>244</sup> Բացի վերը յիշուածներէն՝ նշանակուած են նաեւ՝ L. H. Vincent, Canaan. Paris 1914. — Իւր՝ Céramique de la Palestine, Paris 1923. — եւ ուրիշներ:

<sup>245</sup> Հմմտ. R. Pumpelly, Explorations in Turkestan. Washington 1908. — Անաւ Ա. խաւը 45 սաք թանձրութիւն ունի. Անաւ Բ՝ 15 սաք, բակ Անաւ Գ՝ 60 սաք:

<sup>246</sup> Տես անդ՝ էջ 44—47 եւն:

Թեամբ<sup>251</sup>: Բաց աստի այժմ լոյս տեսած է Հայաստանի Քարէ-զարի մասին հետաքրքրական եւ ճոխ պարունակութեամբ երկ մը, որուն մէջ Խ. Սամուէլեան երկարօրէն խօսած է Շամիրամալթիի եւ անոր տուած անարկայից մասին, որոնց բաւական մաս մ'ալ պատկերացուցած է՝ նոյն մատենին կից Պատկերներուն շարքին մէջ<sup>252</sup>: Գոթախոսարար պէտք ենք յաւելուլ թէ այսպիսի մեր նոր գրականութեան համար ցանցատ եւ կարեւոր գործ մը, որ հաղիւ թէ երկրորդ տղազրութիւն մը կրնայ տեսնել եւ ուստի նաեւ այս տեսակէտով լաւագոյն տպագրութեան մ'արժանի էր, տպագրուած է ընդհանրական խեղճ թղթի վրայ եւ յաճախ անգոհացուցիչ եւ դժուարընթեռնի կերպով: Պատկերները՝ թէեւ քիչ մ'աւելի լաւագոյն թղթի վրայ՝ նոյնպէս հետի են բոլորովին գոհացուցիչ ըլլալէ. եւ ի հարկէ գործոյ տպագրութիւնն ամենեւին կարելի չէ համեմատել նման գործոց եւրոպական տպագրութեանց հետ: Գոնէ ուրախ ենք որ Ե. Լալայեանի նոյնպէս նոր լոյս տեսած երկատրութիւնը Հայաստանի դամբաններու պեղմանց մասին, համեմատաբար լաւագոյն թղթով եւ նոյնպիսի տպագրութեամբ լոյս տեսած է: Այս գործոյ մասին՝ յետոյ: Հայաստանի նորաբարեաց զարի մասին քանի մը դիտողութիւններ արդէն առիթ ունեցանք նշանակելու<sup>253</sup>. ուրիշներ՝ յետոյ մատնանիւ կ'ընենք պատեհ առթիւ:

Շատ հետաքրքրական են Քարագարու պատմութեան վերջին երկու գլուխները. եւ նախ եօթներորդը, որուն խորագիրն է՝ «Ազգագրական-լեզուաբանական մշակոյթային

հետազոտութեան արդեւնքներն՝ իրենց աղբիւրով վաղահնախօսութեան հետ» (Հատած է, էջ 479—534): Վաղահնախօսական այլեւայլ շրջաններուն հետ կը համեմատուին համապատասխանող մշակոյթները: Հիմնական մշակոյթները կը կոչուին Նախաբարեակի շրջանի հետ. իսկ Հիմնական մշակոյթներուն կը վերաբերին՝ մշակոյթ Գաճաճներու կամ Թզուկներու եւ Թզկագգեաց (Pygmaen und Pygmoide). — Մշակոյթներ Քամանագգեաց, Աւարալագգեաց եւ Եսկիմոյագգեաց (Tasmanoide, Australoide, Eskimoide): — Կանխագոյն-Արմատական մշակոյթը կը համեմատուի Նուապարայից շրջանի հետ: Այս մշակոյթներէն յիշենք Տոտեմական (Totemistisch), Հին-Տնկագործ եւ Հին-Պարջառարոյ մշակոյթները: — Միջին-Արմատական մշակոյթներ կը համեմատուին Նախա-նորաբարեակի շրջանին հետ. իսկ մշակոյթներ են՝ Կրտսեր-Տնկագործական, Արջառարոյ-Հոլուական եւ Գրատարոյ մշակոյթները: — Վերջապէս Խառնուրաբարեան շրջանի մէջ կը նկատուին Անագան-Արմատական մշակոյթներ, որոնք են՝ Գիւղացուց, Տիրուկի (Տերանց) եւ Հովիւ-Ռազմիկներու մշակոյթները:

Վերջին կարեւորագոյն գլուխն է՝ «Տոհմական եւ Ֆեղական խեղիքներ» (Հատած է, էջ 535—594): Այս տեղ նախ նկատուած է Սեգան-Արմատական մշակոյթը՝ շրջանին: Եւ կարգաւ կը նկարագրուին Լեզուաբարեան Յարեթական (էջ 541—543). Բասկեան եւ Լիգուրեան, Գրաւիդական, Սուսերական, Նախախաւերէն (էջ 548). Սեմական, Քամանեան, Հնդիկերուպական (էջ 552—559). Ալտայեան, Տիրեթ-Չինական, Հարաւա-կղզիական (Australoasiatisch). — Իսկ Միջին-Արմատական շրջանի Լեզուատոհմերէն շուրին՝ Հարաւասիական (Austroasiatisch), Բանտուական եւն, եւ վերջապէս Կանխագոյն-Արմատական շրջանէ կրկին լեզուատոհմեր (էջ 535—570): Հեղինակն անշուշտ մասնագէտ լեզուագէտ մը չէ. բայց նաեւ այս բաժնին մէջ կը նշմարուի քննադատական միտք մը հանդէպ այն աղբիւրաց՝ գործոց այս տեղ գործածած է: Այսպէս նախահարկէնի մասին խօսելով կը կոչէ գանի «բուն լեզու Միջին Փոքր-Ասիոյ», եւ ի հարկէ հնդիկեր. Հայթերու նախորդ ժողովրդեան,

<sup>251</sup> Բաւ ըլլան նշանակուածներն՝ «Ռուսին», էջ 286—290, 293—294, 295—297, 300—303 եւն:

<sup>252</sup> Խաչիկ Սամուէլեան, Հին Հայաստանի կուլտուրան: Ա. Հատոր: Քարէ դար: Երեւան (Պետ. Հրատ.) 1931, էջք 381. — Տխտ. I—XXVIII, որոնց վրայ Պատկերը («Նկարներ»), Թ. 1—66: — Շամիրամալթի անդ, էջ 128—130, 134, 339—340, ճն. 63—68 եւ Պտկ. 34 («Քարէ եւ բրոնզէ իրեր», «Որսիկներ») գործիքներ. — 35 («Քարէ կացին՝ սուկէ կոթով»): — 36 («Քարէ եւ սուկէ իրեր»): — 37 («Ոսկէ սակոյններ, բեղեր, քերէններ, իլիկի գլուխներ կաւեց»): — 41 («Նէոլիթի կերամիկա կարմիր քնարակով»): — 42 («Նէոլիթի կերամիկա քարթած»): — 43, 44, 45

<sup>253</sup> Հմմտ. վերին էջ 194—197 եւն, ճն. 207—211:



բազմաթիվ խնդիրներու առիթ կ'ընծայէ 258 : Թողով այս ամէնը՝ մատնանիշ ընենք՝ ամբողջութեան համար՝ վերջին բաժնէն քանի մը դիտողութիւններ մեզի համար կարենոր մէկ երկու ցեղերու մասին :

Արդ Հեղինակը կողմնակից է Հնդիկեր-րոպական ցեղին հիւսիսական նախաոր հայ-րենեաց, եւ թէ այս Հնդիկերոպական ցեղին այլեւայլ ժողովուրդներուն կամ առանձնա-կան ազգերուն բաժանումը տեղի ունեցած ըլլայ Պոնտի դարու մէջ՝ իբր Բ Հազարամե-կին : Կը լուծէ ու կը մերժէ այլեւայլ առար-կութիւններն որոնք յարուցուած են այս կամ այն մասին, եւ այն՝ մանաւանդ անոնց կող-մանէ՝ որոնք Հնդիկերոպական ցեղը նախ-նարար Ասիոյ խորերէն դէպի Եւրոպա դե-մած կ'ուզեն համարել : Այս վերջին տեսու-թեան կողմնակից է օրինակի համար ազգա-զրագէտ մը, իւր մէկ գրութեան մէջ՝ «Հնդիկերմանացուց կրօնքը՝ իւր քաղա-քակրթական-պատմական աղբրներով» 259 :

258 Ասոնց՝ ինչպէս նաև ուրիշ նոյն ու աւելի հին եւ աւելի կրտսեր մարդկային կմաքներուն եւ յա-րակից խնդիրներուն մասին հմտ. ի միջի այլոց՝ R. Köppl, Die neuentdeckten Neandertalmenschen von 'Atlit: «Biblica», Vol. 13, fasc. 3 (Roma 1932), p. 358—362. Նշանակենք թէ այս տեղ նշա-նակուած է մատնախօսական մը, ուր կ'ըսուի թէ Menghinի դորձը «հակայ երկ մըն է, որուն համար կարելի է բռն առանց չափազանցութեան թէ նախապատմական ուսումնասիրութեանց մէջ նոր դարգուրել մը կը կազմէ» (ի «Anthropologie», XLII, fasc. 1—2, p. 103): Աւելորդ կը համարենք նշանակել ուրիշ մատնախօսականները (հմտ. յա-ջորդները) :

259 P. Wilh. Koppers, Die Religion der Indogermanen in ihren kulturhistorischen Beziehun- gen: «Anthropos», XXIV, 1929, Heft 3—6, p. 1073—1089. — Այս տեղ յիշուած մատնանիշ մատնանիշ ըլլայ յատկապէս Ջիպոզի մասին՝ P.-E. Dumont, L'Aśvamedha, description du sacrifice solennel du cheval dans le culte védique d'après les textes du Yavurveda blanc. Paris 1927. — արիական կրօնից մասին՝ L. von Schroeder, Arische Religion, I. Leipzig. 1914; II, 1926. — նաև այլ կրօնից մասին՝ R. Much, B. Geiger etc., Die Religionen der Erde. Leipzig 1929, եւ ուրիշները : — Այս առիթ յիշուած ըլլան նշանաւոր երկերս. P. W. Schmidt, Handbuch der vergleichenden Religionsgeschichte. Ursprung und Werden der Religion. Theorien und Tatsachen. Münster 1930, pp. XVI + 296 (ասոր թարգմանութիւններ՝ The Origin and Growth of Religion, transl. by N. J. Rose. London 1931, pp. XVI + 302; Origine et Evolution de la Religion, trad. par A. Lemonnyer. Paris 1931, pp. 360). — Իրեն՝ Der Ursprung der Gottes- idee. I. Eine historisch-kritische und positive Studie. Bd. I: Historisch-kritischer Teil. Münster 1926; 2. umgearbeitete Aufl., pp. XL + 832; id., Bd. II, 2: Die Religionen der Urvölker: Amerika. Münster 1929, pp. XLIV + 1065; Bd. III, 2: Die Religionen der Urvölker Asiens und Australiens. Münster 1931, pp. XLVII + 1155. (Դ. եւ Ե. Հատորները պիտի ըլ-

